«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/581

«18» 04 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր
Արմեն Աբգարի Մուրադյանի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԷԱՃԱՊՁԲ-2024/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման կողմից 09.04.2024թ.-ի զեկուցագրով «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մատակարար) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորի կողմից 10.04.2024թ.-ին «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին ուղղված ԷԱՃԱՊՁԲ-2024/16-11-ԵՊԲՀ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) լուծման և 11.04.2024թ.-ին որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման ծանուցումները, պարզեցի հետևյալը.

1. Պատասխանատու ստորաբաժանման ներկայացրած փաստերը և պահանջը.

Պատասխանատու ստորաբաժանումը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 09.04.2024թ.-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

2024 թվականի մարտի 19-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության միջև կնքվել է բժշկական սարքերի, բժշկական նշանակության ապրանքների, քիմիական նյութերի մատակարարման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-11-ԵՊԲՀ-1» պայմանագիրը:

Սույն թվականի ապրիլի 4-ին ՀՀ պետական վերահսկողական ծառայության թիվ Ե/792-24 գրությամբ Համալսարանը ծանուցվել է «Լինարե» ՍՊ և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերությունների փոխկապակցվածության մասին, մասնավորապես՝ «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցը հանդիսանում է նաև «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր: Գրությամբ ծանուցվել է նաև, որ «Լինարե» ՍՊ ընկերությունը 2023 թվականի

դեկտեմբերի 23-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բացի այդ, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝

121. Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Տվյալ դեպքում «Լինարե Մեդ» ՍՊ ընկերությունը մասնակցության հայտ ներկայացնելով ԷԱՃԱՊՁԲ-2024/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգին, ներկայացրել է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, որով հայտնել և հավաստել է, որ ընկերությունը և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Առաջնորդվելով կնքված Պայմանագրի 8.3-րդ կետով. «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:» և հաշվի առնելով այն փաստը, որ Պայմանագրի շրջանակներում մատակարարվել է միայն 56-րդ չափաբաժնի՝ «ԷՍԳ էլեկտրոդ» անվանումով ապրանքատեսակից 500 հատը՝ պատասխանատու ստորաբաժանումը առաջարկել է միակողմանի լուծել 2024 թվականի մարտի 19-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-11-ԵՊԲՀ-1» պայմանագիրը թիվ 1, 55 չափաբաժինների մասով ամբողջությամբ և թիվ 56 չափաբաժնի չմատակարարված, մնացորդային՝ 38500 հատի մասով:

2. <u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի մարտի 19-ին կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-11-ԵՊԲՀ-1» ծածկագրով բժշկական ապրանքների, բժշկական նշանակության ապրանքների, քիմիական նյութերի գնման պայմանագիր, որի շրջանակներում մինչ օրս մատակարարվել է միայն 500 հատ «ԷՍԳ էլեկտրոդ»:

2. 2024 թվականի ապրիլի 4-ին ՀՀ պետական վերահսկողական ծառայության թիվ 6/792-24 գրությամբ Համալսարանը ծանուցվել է «Լինարե» ՍՊ և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերությունների փոխկապակցվածության մասին, մասնավորապես՝ «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցը հանդիսանում է նաև «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր: Գրությամբ ծանուցվել է նաև, որ «Լինարե» ՍՊ ընկերությունը 2023 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. Նշված ընթացակարգի շրջանակներում «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 2024 թվականի փետրվարի 11-ին:

4. Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Մեղ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:»

5. 10.04.2024թ. «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագիրը թիվ 1, 55 չափաբաժինների մասով ամբողջությամբ և թիվ 56 չափաբաժնի չմատակարարված, մնացորդային 38500 հատի մասով միակողմանի լուծման մասին: Նույն օրը ծանուցումը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

6. 11.04.2024թ. «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է մինչև ապրիլի 16-ը ներառյալ որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման մասին: Մինչև ապրիլի 17-ը ներառյալ «Լինարե Մեդ» ՍՊԸ-ի կողմից Համալսարանի որևէ հաշվեհամարին փոխանցում չի իրականացվել:

3. <u>Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա.Ա.Մուրադյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարություն հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարություն հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող բառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող բառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի մարտի 19-ին կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-11 ԵՊԲՀ-1» ծածկագրով բժշկական սարքերի, բժշկական նշանակության ապրանքների, թիմիական նյութերի գնման պայմանագիր:

2024 թվականի ապրիլի 4-ին ՀՀ պետական վերահսկողական ծառայության թիվ Ե/792-24 գրությամբ Համալսարանը ծանուցվել է «Լինարե» ՍՊ և «Լինարե Մեդ» ՍՊ ընկերությունների փոխկապակցվածության մասին, իսկ «Լինարե» ՍՊ ընկերությունը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նշված ընթացակարգի շրջանակներում «Լինարե Մեդ» ՍՊ ընկերության կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 2024 թվականի փետրվարի 11-ին:

Ապրիլի 10-ին «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագիրը թիվ 1, 55 չափաբաժինների մասով ամբողջությամբ և թիվ 56 չափաբաժնի չմատակարարված, մնացորդային 38500 հատի մասով միակողմանի լուծման մասին:

Պատվիրատուի ղեկավարի կողմից ապրիլի 11-ին պաշտոնապես ծանուցվելուց հետո «Լինարե Մեդ» ՍՊԸ-ն մինչև ապրիլի 17-ը ներառյալ, չի վճարել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա տվյալների հետ՝ արձանագրում եմ, որ « Լինարե Մեդ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը՝ «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, գնահատել բավարար:

2. «Լինարե Մեդ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Լինարե Մեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության հարարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կողմից որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը՝ պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Լինարե Մեդ» ՍՊԸ	01063047	ք. Երևան, Նանսենի 7/43	X			18.04.2024թ ԷԱՀԱՊՁԲ 2024/16-11 ԵՊԲՀ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐ՝ Ա.Ա. ԵՄՈՒՐԱԴՅԱՆ